**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ

**15 հուլիսի 2024 թվական, N 89-Ա**

## ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ (ՆԱԽԿԻՆ՝ ՇԱՀՈՒՄՅԱՆ) ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-002-0003-0004 ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ, 0.00745 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՎԵՐԻՉԿԱ ՎԱՆԻՉԿԱՅԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 63-րդ հոդվածի 2-րդ պարբերության 2) կետով, 66-րդ հոդվածի 1-ին կետի 4) ենթակետով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286-Ն որոշմամբ հաստատված կարգով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով Վերիչկա Վանիչկայի Սիմոնյանի դիմումը, 08.09.1998թ. տրված դատարանի որոշումը, «ՏՍ-Ռիելթի» ՍՊ ընկերության կողմից տրված հողամասի և շինության հատակագծերը, հաշվի առնելով, որ Վերիչկա Վանիչկայի Սիմոնյանն ընդունել է խանութ-տաղավարի սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Ալավերդի քաղաքի Բաղրամյան (նախկին՝ Շահումյան) թաղամասում գտնվող, 06-002-0003-0004 ծածկագրից առանձնացվող, 0.00745 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, 59004 (հիսունինը հազար չորս) ՀՀ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով, օտարել հողամասում առկա խանութ-տաղավարի նկատմամբ, դատարանի 08.09.1998թ. տրված որոշմամբ, սեփականատեր ճանաչված Վերիչկա Վանիչկայի Սիմոնյանին:
2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք

ներկայացնող հողամասերում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց.

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | | | |
| 4. | ԱՐՄԻՆԵ | ԵՐԻՑՅԱՆ | | | |
| 5. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | | | |
| 6. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՁԱՎԱՐՅԱՆ | | | |
| 7. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | | | |
| 8. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 9. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 10. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | | | |
| 11. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 12. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | | | |
| 13. | ՀԱՅԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | | | |
| 14. | ՍԻՄՈՆ | ԶԱԽԱՐՈՎ | | | |
| 15. | ՆԱՐԻՆԵ | ԹՈՐՈՍՅԱՆ | | | |
| 16. | ՏԻԳՐԱՆ | ՊԱՊՈՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ., հուլիսի 15,
Լոռու մարզ, ք. Ալավերդի